ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2017 թվականի N 43

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Արմեն Բակալյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքում գտնվող 0.07191 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասում (ծածկագիր՝ 0101-0059) չորանոցի շինության և հարող տարածքի կազմակերպման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Արմեն Բակալյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Կառուցման համար օգտագործվող 120.0 քմ հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. մայիսի 30
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2017 թվականի N 44

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-ԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԺՈՐԻԿ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2012 թ. մարտի 07-ի N 09-Ն որոշումը, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացը կազմակերպող աճուրդային հանձնաժողովի կողմից 2017 թվականի մայիսի 30-ին կայացած աճուրդի արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի մայիսի 30-ին կայացած աճուրդ-վաճառքում հաղթող ճանաչված Ժորիկ Նարիբեկի Այվազյանի հետ 0046-0023 ծածկագրի 0.08 հա և 0046-0024 ծածկագրի 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերի նկատմամբ կնքել առուվաճառքի պայմանագրեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2017 թ. մայիսի 31

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2017 թվականի N 45

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 17-ի, փետրվարի 06-ի, փետրվարի 13-ի, մարտի 22-ի, ապրիլի 19-ի, ապրիլի 25-ի, ապրիլի 26-ի, մայիսի 10-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում հասցե տրամադրելու մասին» նույն բովանդակությամբ վերնագրերով N 02, N 07, N 08, N 15, N 23, N 27, 28, 29, N 30, 31, N 37 որոշումների նախաբանում «32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի» բառերով:
2. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 27-ի, մարտի 28-ի, մարտի 31-ի «Ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն տալու մասին» նույն բովանդակությամբ վերնագրերով N 17, N 18, N 19 որոշումների նախաբանում «40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը» բառերը փոխարինել «45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը» բառերով:
3. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 01-ի, ապրիլի 10-ի և մայիսի 04-ի «Համայնքի ավագանու արտահերթ նիստ գումարելու մասին» նույն բովանդակությամբ վերնագրերով N 06, N 20 և N 35 որոշումների նախաբանում «15-րդ հոդվածով» բառերը փոխարինել «17-րդ հոդվածով» բառերով:
4. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 01-ի «Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին» N 05 որոշման նախաբանում «33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի» բառերը փոխարինել «36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի» բառերով:
5. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 24-ի «Համայնքի սեփականություն հանդիսացող հանդիսությունների սրահը օգտագործման տրամադրելու մասին» N 16 որոշման նախաբանում «32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի» բառերը փոխարինել «35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի» բառերով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. մայիսի 31
գ. Նոր Արտամետ